

Ժողովուրդ

114
(2594)

4 օգոստոսի հինգշաբթի 2022
տպագրության ժԱ տարի

✉ ք. Երևան, Արմավյան 22ա/3 (0010)

☎ + 374 10 546423

@ info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

100 դրամ

ՆԻԿՈՒ ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱՔԵԼ Է. ՄԱՍ 61





Այս օրերին, երբ Ադրբեջանն Արցախում լարվածություն է հրահրում ու կրակ բացում, ՀՀ իշխանության ծայն-ծայտունը չի լսվում: Վարչապետ Նիկոլ Փաշինյանը, ըստ երեւույթի, դեռ հանգստի մեջ է, վայելում է արձակուրդը, իսկ մյուս պաշտոնյաներն էլ, պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանի գլխավորությամբ, «հանգիստ նստել են տեղերը»:

Ուղիղ վեց տարի առաջ՝ 2016-ի հուլիսի 6-ին, այն ժամանակ ընդդիմադիր պատգամավոր Փաշինյանը, որ Արցախին վերաբերող ամեն հարցի մասին ամենատուր ձեռով էր քննադատում ՀՀ-ականներին, հայտարարում էր. «Ամբողջ քաղաքական էլիտան բոլորիս ուզում է հասցնել մի իրավիճակի, որ ասենք՝ չենք կարողանում այդ հողերը պահել (Արցախը նկատի ունի խմբ.)... 15-20 տարվա թալանը արդարացրել են, թե բա՛ գենք ենք առնում: Դրանից հետո եկել, ասում են՝ 80-ականների գենքով են կռվում, 800 հա տարածք էլ կորցրել ենք: Հարց է ծագում՝ դուք ո՞վ եք ու էս երկրում ինչո՞վ եք զբաղված ընդհանրապես»:

Լրագրողի կոնկրետ հարցին, թե Հայաստանի ու Արցախի՝ գոյություն ունեցող սահմանի մեջ կա արդյոք մի տարածք, որ հնարավոր է թուրքերին տալ ինչ-որ մի բանի դիմաց, Փաշինյանը խիստ եւ հստակ է պատասխանում. «Ոչ, չկա: «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը վերջերս հստակ հայտարարել է՝ այն տարածքը, որ ունենք, կենսական տարածք է»:

2016-ից հետո, սակայն, այսօր շատ բան է փոխվել, ու արդեն ոչ թե 800 հա տարածք, այլ Արցախի 75 տոկոսն ենք կորցրել, ու դա տեղի է ունեցել Փաշինյանի կառավարման ժամանակ: Նրա համոզումը, թե Արցախից հակառակորդին հանձնելու որեւէ տարածք չկա, փուչիկի պես տրաքեց, երբ հայտարարեց, թե՝ «դուք ուզում եք համոզել, որ 90 եւ ավելի բնակչություն ունեցող Շուշին հայկական էր. դժբախտ, դժգույն մի քաղաք»: Փաստացի, նրա՝ Արցախի ու Հայաստանի տարածքները չզիջելու մասին հայտարարությունները սուտ են եղել:

Օգոստոսի 3-ից՝ ժամը 09:00-ից սկսած, ադրբեջանական ստորաբաժանումները, կոպտորեն խախտելով հրադադարի պահպանման ռեժիմը, թիրախավորել են ՊԲ մարտական դիրքերն ու զորամասերից մեկի մշտական տեղակայման վայրը՝ բացի տարբեր տրամաշափի հրաձգային զինատեսակներից կիրառելով նաեւ ականանետներ, նռնականետներ եւ հարվածային ԱԹՍ-ներ, ինչի հետեւանքով մահացու վիրավորում են ստացել ՊԲ պայմանագրային զինծառայողներ Գուրգեն Գալերիի Գաբրիելյանը եւ Արթուր Յուրիի Խաչատրյանը: Եւս 14 զինծառայող տարբեր աստիճանի վիրավորումներ է ստացել: Սա երեկ երեկոյի պաշտոնական թվերն են, որոնք իրականում կարող են ավելանալ կամ փոփոխվել: Իսկ ի՞նչ են անում ՀՀ իշխանություններն այս իրավիճակում: Նախ՝ նշենք, որ այս օրերի լարված իրավիճակից հետո՝ երեկ, Արցախի Հանրապետության նախագահ Արայիկ Հարությունյանը մասնակի զորահավաք է հայտարարել, հայտարարություն է տարածել նաեւ Արցախի արտաքին գործերի նախարարությունը՝ դիմելով միջազգային հանրությանը: Ազգային ժողովը գտնվում է արձակուրդում: Արձակուրդում է նաեւ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը: Երեկ ամբողջ օրը փորձեցինք կառավարությունից պարզել՝ կլինի հայտարարություն, կամ Փաշինյանը կվերադառնա արձակուրդից, թե ոչ, սակայն մեր բոլոր փորձերն անցան ապարդյուն, իսկ պաշտոնական հաղորդագրության այդպես էլ չհանդիպեցինք: Միայն ՀՀ արտաքին գործերի նախարարն էր ընդունել ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցիչ Անջեյ Կասպրժիկին, սակայն խոսակցությունը գլորբալ էր եւ ոչ հասցեական: Ստացվում է՝ Հայաստանը, կարծես թե, իր ձեռքերը լվացել է Արցախից, եւ այն, ինչ հուլիսի 29-ին հայտարարել էր ՀՀ ԱԽ Արմեն Գրիգորյանը, կատարվում է: Նա ասել էր. «Պետք է ակտիվորեն քննարկենք ԼՂ հարցը Հայաստան-Ադրբեջան հարաբերություններից տարանջատելու տարբերակը»: Իշխանությունների մոտ կարծես թե ստացվում է: Նիկոլ Փաշինյանի թիմը մոռացել է ՀՀ գլխավոր պարտավորությունը, այն է՝ Հայաստանը Արցախի անվտանգության երաշխավորն է:



Ուշագրավ իրավիճակ՝ դատական համակարգում: «Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ ԲԴԽ նախկին նախագահի ժամանակավոր պաշտոնակատար Գագիկ Զհանգիրյանի հրաժարականից հետո որոշ դատավորներ, չի բացառվում, առաջիկայում ազատման դիմումներ ներկայացնեն: Բանն այն է, որ շատ դատավորներ կորցրել են իրենց թիկունքը եւ այդ պայմաններում նախընտրում են պաշտոնից ազատման դիմում գրել: Առաջին հրաժարական տվողը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դատավոր Տիգրան Սիմոնյանն է լինելու, ու չի բացառվում վերաքննիչում այս մեկ հրաժարականը չլինի, եւ այլ դատավորներ եւս հրաժարականի դիմում ներկայացնեն: Ի դեպ, դատավորների այս խառնաշփոթն ու անպաշտպան լինելու զգացողությունը սկսվեց այն բանից հետո, երբ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի նախագահ ընտրվեց Մխիթար Պապոյանը, այլ ոչ թե Գագիկ Զհանգիրյանի նախընտրելի թեկնածու Սեւակ Համբարձումյանը:

Տեղական խոզի միսը թանկացել է: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ խոզի մսի գինը հուլիսի ամսին, հունիսի համեմատ, բարձրացել է 3.7 տոկոսով: Այսօր խոզի մսի գինը հասնում է 4200 դրամի: Մանագետների խոսքով՝ չի բացառվում, որ այն առաջիկայում էլ ավելի թանկանա: Մյուս կողմից՝ նշենք, որ ոչ միայն խոզի մսի գինն է բարձրացել, այլեւ խոզերի գլխաքանակի անկում է արձանագրվել: Թեեւ Հայաստանը խոզի միս ներկրում է, բայց, այնուամենայնիվ, արձանագրենք, որ ներկրվածը իրացման շուկայում չնչին ծավալներ ունի եւ չի լրացնում բացը: Միաժամանակ նկատենք, որ այս տարվա հինգ ամիսներին խոզի մսի արտադրության ծավալներն են բավականին պակասել (16.1 տոկոսով): Բացի այս, «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ տավարի մսի գինն էլ է բարձրացել: Տավարի փափուկ մսի մեկ կիլոգրամի գինը գերազանցում է 4800 դրամը, մինչդեռ այն տարեսկզբին 4400 դրամ էր: Տավարի մսի գնաճի պատճառներից մեկը անասնակերի խնդիրն է: Նախորդ տարի, եղանակային պայմաններից ելնելով, բավարար քանակությամբ անասնակեր չկուտակվեց, բացի դրանից, որոշ տարածքներ անցան թշնամու վերահսկողության տակ, այս պատճառով անասնապահությունը Հայաստանում դարձել է ոչ եկամտաբեր: Պատասխանատու կառույցը՝ Էկոնոմիկայի նախարարությունը, լուրջ եւ առարկայական քայլեր չի ձեռնարկում:



ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԴԱՎԱՃԱՆԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄ

ԱՐՑԱԽ ԳՆԱՅՈՂ ՃԱՆՊԱՐՎՆԵՐԸ ԿՓԱԿՎԵՆ

Լեհաստանում ՀՀ նախկին դեսպան Էդգար Ղազարյանն ասում է, որ եթե Լաչինի միջանցքի փոխարեն նոր ճանապարհ գործարկվի, ադա Ադրբեջանը Հայաստանից դեղի Արցախ գնացող բոլոր ճանապարհները կարող է խուլ փակել:

Պարոն Ղազարյան, Արցախի նախագահը, կառավարությունը հայտարարություն էին տարածել, որ Ադրբեջանական կողմից ռուս խաղաղասիրտների միջոցով հարդրողություն է փոխանակվել Լաչինի միջանցքի առնչությամբ, որ այլընտրանքային ճանապարհով պետք է կազմակերպվի երթևեկը: Ինչ է սա ենթադրում, նշանակում է արդյոք, որ Հայաստանը Արցախին կապող միջանցք այլեւ չի լինելու, եւ այսպես անարգելք այլեւ չենք կարող Արցախ մեկնել: Այս ճանապարհի գործարկումը ի՞նչ վտանգներ ունի արհասարակ:

Մենք դրա մասին խոսելու շատ առիթներ ենք ունեցել, եւ իրականությունը, ցավոք սրտի, համապատասխանում է մեր՝ նախկինում հնչեցրած անհանգստությանը: Նախ՝ ասեմ Ձեզ, որ Լաչինի միջանցքը ճանապարհի չէ, Լաչինի միջանցքը տարածք է, որով անցնում են նաեւ ավտոմոբիլային միջոցները, որով հետեւ Լաչինի միջանցքում, ճանապարհից բացի, գոյություն ունեն նաեւ հայկական բնակավայրեր, գոյություն ունի գազատար, էլեկտրահաղորդման բարձր լարման գծեր, կապի մալուխներ, որոնցով Արցախը կապվում է Հայաստանի հետ, եւ դրանք Արցախի կենսագործունեության համար ունեն կենսական նշանակություն: Լաչինի միջանցքը այն միակ տարածքն է, որի մեջ ներառված է նաեւ ավտոմոբիլային ճանապարհ, որով Լոյսեմբերի 9-ի հայտարարությամբ Ադրբեջանը պարտավորություն է ստանձնել ապահովել անվտանգությունը մարդկանց, բեռների եւ տրանսպորտային միջոցների անխափան շարժի:

Պարոն Ղազարյան, իսկ ի՞նչ կասեք այն մասին, եթե հիմա հայկական կողմը համաձայնի դուրս գալ Լաչինի միջանցքից: Ի՞նչ է սպասվում մեզ:

Եթե հիմա հայկական կողմը համաձայնի դուրս գալ Լաչինի միջանցքից, որից դուրս գալը որեւէ տեղ չի կարգավորվում կամ կանոնակարգվում, Լոյսեմբերի 9-ի կապիտուլացիոն հայտարարությամբ, նշանակում է, որ ադրբեջանցիները Նիկոլ Փաշինյանի եւ Արայիկ Յարությանի ունեցած բանավոր պայմանավորվածությամբ մեզ հանում են երաշխավորված գոտուց, տանում են մի ճանապարհ, որը կառուց-



վել է իրենց միջոցներով եւ անցնում է Ադրբեջանի կողմից վերահսկվող տարածքներով: Սա նշանակում է, որ ցանկացած պահի Ադրբեջանը կարող է ուղղակի խուլ փակել Հայաստանից Արցախ գնալու բոլոր հնարավորությունները: Պարզ է, որ երբ ռուս խաղաղասիրտները տեղափոխվեն Լաչինի միջանցքից դեպի նոր ճանապարհ, եւ այնտեղ խաղաղասիրտներ չլինեն, կարճ ժամանակահատվածում ամբողջությամբ կտեղահանվեն այնտեղի հայկական բնակավայրերը, եւ ադրբեջանցիները կփակեն գյուղից դեպի Արցախ տանող այդ Լաչինի ճանապարհը: Կտեղադրեն իրենց սահմանի վրա անցակետեր եւ կփակեն այդ ճանապարհը, այնտեղ հետ վերադառնալու ոչ մի հնարավորություն չենք ունենա, իսկ այս ճանապարհը կվերահսկվի իրենց կողմից: Ադրբեջանը շահում է բոլոր առումներով, այսինքն՝ կտրում է մեր կապը Արցախի հետ, ճանապարհը դարձնում միայն իր կողմից վերահսկելի, եւ երրորդը՝ կարող է պահանջ դնել հայկական կողմին իր հետագա ծրագրերի հա-

մար: Իրենք ասում են՝ դուք տվեք մեզ Նախիջեւանը Ադրբեջանի արեւմտյան շրջանների հետ կապող հնարավորություն, որը նրանք հիմա չունեն: Հիմա նրանք այդ ճանապարհի դեպքում կասեն՝ եթե ուզում եք այս ճանապարհը միջանցքի կարգավիճակ ունենա, ուրեմն տվեք Լոյսեմբերի ճանապարհի մեզ համար Լոյսեմբերի ճեփմով: Եթե դուք մեզ ճանապարհի եք տալու՝ վերահսկելով անձնագրային ճեփմով, ուրեմն դուք էլ այս կողմից պետք է անցնեք անձնագրային ճեփմով: Այսինքն՝ կբերեն եւ կհավասարեցնեն եւ նոր պահանջներ իրագործելու ճեփմը հնարավորություն կստանան: Հետեւաբար Լաչինի ճանապարհից դուրս գալը ուղղակի հերթական դավաճանական որոշումը կլինի հայկական կողմից՝ Նիկոլ Փաշինյանի եւ Արայիկ Յարությանի կողմից: Այն ուղղակի վտանգելու է Արցախում ապրող մեր հայրենակիցների ճակատագիրը, եւ Արցախի հայրենասիրտները հարցը դառնալու է խիստ օրակարգային:

Ջրուցեց ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՍՅԱՆԸ

ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՐՄԵՆՈՒԹՅՈՒՆ

ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՐՄԵՆՈՒԹՅՈՒՆ



ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի պետական վերահսկողություն իրականացնող պաշտոնատար անձանց աշխատանքի կիսավերաբերություն կտրամադրեն, իսկ կանանց, կիսաշրջագգեստի փոխարեն, ըստ ցանկության, կտրվի նաեւ տաբատը: Պարզվում է՝ տեսչական մարմնի աշխատողներն ունեն միայն ծմեռային վերարկու, եւ կառավարությունը որոշել է նրանց ապահովել աշխատանքի վերարկուով:

Ըստ պաշտոնական հիմնավորման՝ ծմեռային կիսավերարկուն բավականին հաստ տեսակի է, եւ հնարավոր չէ աշխատանք օգտագործել: Բացի այդ, նրանք կիսավերարկուները կրում են ամբողջ աշխատանքային օրվա ընթացքում պետական վերահսկողություն իրականացնելու շրջանակներում, իսկ պետական վերահսկողություն իրականացվում է յուրաքանչյուր աշխատանքային օր տարբեր վայրերում, մասնավորապես՝ տնտեսավարող սուբյեկտներին պատկանող պահեստներում, անասագոմերում, դաշտերում, մեքենաների բեռնախցիկներում:

ՍԳՐԵՋԱՆԸ ԸՈՒՇԻՈՒՄ

Ադրբեջանը Շուշիում թատրոնի շենք կկառուցի: Այս մասին Ադրբեջանի մշակույթի նախարար Անար Զերիմովն է հայտարարել:

«Չնայած որ Շուշիի գլխավոր հատակագիծը հաստատված է, այնուամենայնիվ, քննարկվում է, թե մշակութային ինչ հաստատություններ են լինելու քաղաքում: Պետք է հաշվի առնել հանգամանքը, որ քաղաքի տարածքն այդքան էլ մեծ չէ, հետեւաբար մշակութային հաստատությունների տեղակայման համար օպտիմալ լուծում պետք է գտնենք: Ենթադրելի է, որ այստեղ թատրոնի նոր շենք կկառուցվի», - ասել է նա: Նշենք նաեւ, որ այս օրերին հայկական Շուշիում պաշտոնական Բաքուն կազմակերպել ու անցկացնում է ադրբեջանական սփյուռքի երիտասարդների թվով 3-րդ ամառային ճամբարը: Այն կտեղի մինչեւ օգոստոսի 8-ը: Ծամբարին, ըստ ադրբեջանական ՋԼՄ-ների, 52 երկրից ներկայացված երիտասարդներ են մասնակցում:

44-օրյա պատերազմից հետո Ադրբեջանի վերահսկողություն տակ հայտնված հայկական Շուշին, հիշեցնենք, Ադրբեջանը մշակութային մայրաքաղաք է հռչակել ու լայնածավալ շինարարություն է այնտեղ իրականացնում վերացնելով հայկական մշակույթի ու հոգեւոր ժառանգության հետքը:

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ԽՄԻՉՔՆԵՐԻ ԳՆԵՐՆ ԱՃԵԼ ԵՆ

Հայաստանում սննդամթերքի ու ոչ ալկոհոլային խմիչքի գներն աճել են: ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալներով այս տարվա հուլիսին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատ, սննդամթերքի գներն աճել են 13.5 տոկոսով: Հուլիսին, հունիս ամսվա համեմատ, սննդամթերքն էժանացել է 4.3 տոկոսով:

Գնանկում արձանագրել է Վիճակագրական կոմիտեն, բայց ինքը՝ քաղաքացին, այդ գնանկումը չի զգում: Հայաստանի բոլոր քաղաքներում հուլիսին, հունիսի համեմատ, սննդամթերքի գները նվազել

են, այդ թվում՝ գնանկման ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է Իջեւանում: Հիմնականում էժանացել է լոբին, բրինձը, հնդկացորենը, ոսպը: Մյուս կողմից՝ հացն է թանկացել 1.2 տոկոսով, իսկ մակարոնեղենի գներն աճել են 1.5 տոկոսով, ընդ որում՝ մականորեղենի ու հացի շուկայում գնաճ արձանագրվել է դեռեւս նախորդ տարվանից: Պանրի գինը մեկ տարվա ընթացքում բարձրացել է 26.2 տոկոսով: Թանկացել է նաեւ ծուխ. ArmLur.am-ը տեղեկացավ, որ մեկ ամսվա ընթացքում ձվի գինը բարձրացել է 2.7 տոկոսով:

Շաքարավազի շուկայում եւս գնանկում է արձանագրվել 1.6 տոկոսի չափով,

բայց, միեւնույն էմ շաքարավազը շարունակում է բարձր գնով վաճառվել: Այս ապրանքատեսակը այս տարվա հուլիսին, նախորդ տարվա նույն ամսվա համեմատ, թանկացել է 7.5 տոկոսով: Ալյուրի գինը մեկ տարվա ընթացքում բարձրացել է 18 տոկոսով: Նախորդ ամիս ձեթն է էժանացել. Վիճակագրական կոմիտեն այս շուկայում արձանագրել է 3.7 տոկոս գնանկում: ArmLur.am-ը տեղեկացավ, որ կարագի շուկայում եւս գնանկում է արձանագրվել: Բանջարեղենի շուկայում հուլիսին, հունիսի համեմատ, արձանագրվել է 33.7 տոկոս գնանկում:

ՍՅՈՒՆԷ ՀԱՄԱՐՈՒՄՅԱՆ

ԻՐԱՎԻՃԱԿ

ԻՆՉ Է ԲԱՅԱՅԱՅՏՎԵԼ

ՊՈԱԿ-Ի ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

ՔՆՆՉԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

Ո՛վ է Քննչական կոմիտեի 349 քննության գլխավոր վարչության խոշտանգումների եւ պաշտնատար անձանց կողմից բռնություն գործադրելով լիազորությունները չարաշահելու կամ անցնելու հանցագործությունների քննության վարչության պետը:

Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահ Արգիշտի Քյարամյանի հրամանով՝ Յուրա Իվանյանը նշանակվել է ՀՀ քննչական կոմիտեի հատկապես կարեւոր գործերի քննության գլխավոր վարչության խոշտանգումների եւ պաշտնատար անձանց կողմից բռնություն գործադրելով լիազորությունները չարաշահելու կամ անցնելու հանցագործությունների քննության վարչության պետ՝ ազատվելով հիշյալ գլխավոր վարչության սեփականության դեմ ուղղված հանցագործությունների քննության վարչության պետի պաշտոնից:

Հիշեցնենք, որ Ամուլսարի քրեական գործով քննչական խմբի ղեկավար Յուրա Իվանյանն է, որը Բնապահպանության նախկին նախարար Արամայիս Գրիգորյանն ազգականն է: Ի դեպ, հենց Գրիգորյանն է 2016-ին հաստատել հանքի շահագործման փորձաքննական եզրակացությունը:

Փորձագետները կասկածի տակ էին դրել Իվանյանին անջառությունը՝ անելով հետեւյալ հարցադրումը. ինչպե՞ս պետք է Յուրա Իվանյանը քննել շրջակա միջավայրի աղտոտման մասին տեղեկությունները պաշտոնյայի կողմից դիտավորյալաբ թաքցնելու գործը, եթե այդ պաշտոնյան հորեղբոր որդին է:

ԶՈՂԵՐ ԵՎ ՎԻՐԱՎՈՐՆԵՐ

ԱՅ ՊՆ մամուլի ծառայությունը հայտարարություն է տարածել. «Ինչպես արդեն տեղեկացրել ենք, օգոստոսի 3-ին՝ ժամը 09:00-ից սկսած, ադրբեջանական ստորաբաժանումները, կոպտորեն խախտելով հրադադարի պահպանման ռեժիմը, թիրախավորել են ՊԲ մարտական դիրքերն ու զորամասերից մեկի մշտական տեղակայման վայրը՝ բացի տարբեր տրամաչափի հրաձգային զինատեսակներից կիրառելով նաեւ ակա-նանետներ, նռնականետեր եւ հարվածային ԱԹՍ-ներ, ինչի հետեւանքով մահացու վիրավորում են ստացել ՊԲ պայմանագրային զինծառայողներ Գուրգեն Գալերիի Գաբրիելյանը եւ Արթուր Յուրիի հաջատրյանը: ԱՅ պաշտպանության նախարարությունը կիսում է կորստյան ծանր վիճակը եւ զորակցություն հայտնում զոհված զինծառայողների ընտանիքի անդամներին, հարազատներին եւ ծառայակիցներին:

Եվս 14 զինծառայող տարբեր աստիճանի վիրավորումներ է ստացել:

Արցախի Հանրապետությունում խաղաղապահ առաքելությունը իրականացնող ՌԴ զորակազմի հրամանատարության հետ միջոցներ են ձեռնարկվում իրադրությունը կայունացնելու ուղղությամբ: Այս պահի դրությամբ օպերատիվ մարտավարական իրադրությունը հարաբերականորեն կայուն է:

Հետագա զարգացումների վերաբերյալ ԱՅ պաշտպանության նախարարությունը հանդես կգա հարողագրություններով»:

ՀՀ ԱԾ մարդու իրավունքների դաշտայնության եւ հանրային հարցերի մեջական հանձնաժողովի նախագահ, անկուսակցական Թագուհի Թովմասյանը սոցցանցի իր էջում գրում է. «ՀՀ ԱՆ «Փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի՝ ողջամտության բոլոր սահմանները հասող անգործությունը՝ որդես Մարդու իրավունքների եվրոպական կոմիտեից-այի 6-րդ հողվածով սահմանված արդար դասաբնութային իրավունքի խախտման դասճառ:

ՀՀ ԱՆ «Փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ ՊՈԱԿ) անգործության վերաբերյալ բազմիցս բարձրաձայնվել է թե՛ իրավապաշտպան հասարակական կազմակերպությունների, թե՛ անհատ քաղաքացիների կողմից, որոնցից շարունակ ստացել են համապատասխան ահազանգեր, մասնավորապես՝ ՊՈԱԿ-ի կողմից փորձաքննությունների կատարման ժամկետները անհիմն ձգձգելու վերաբերյալ: Շատ են բողոքները, որ տարիներ շարունակ դատարաններում գործերի վարույթները կասեցվում են հենց փորձաքննությունների կատարման ժամկետները ձգձգելու հետեւանքով:

ՊՈԱԿ-ի կողմից ցուցաբերված հերթական անգործության հետքերով բացահայտել են մի դեպք, երբ ամբաստանյալի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է, իսկ քրեական գործի վարույթը՝ կարճվել է քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով հենց այն պատճառաբանությամբ, որ ՊՈԱԿ-ը շուրջ 3 տարի 8 ամիս փորձաքննություն չի իրականացրել ու գործի կյուբերը դատարանին է վերադարձրել առանց փորձաքննություն իրականացնելու: Ավելին՝ ՊՈԱԿ-ից տեղեկացել են, որ հիշատակված գործով դեռեւս 2017 թվականին նշանակված դատատեսաձայնագրային եւ կրկնակի դատավորներին նախատեսվում էր ավարտել 2022թ. երկրորդ եռամսյակում, այսինքն՝ 4 տարի 8 ամիս անց: Արդյունքում, բացի այն, որ ինձ դիմած քաղաքացի Մ.Ս.-ի ընտանիքը գրկվել է սիրելի հորից, դատական գործի անհարկի ձգձգումները, պայմանավորված փորձաքննությունների կատարման ժամկետների ակնհայտ խախտմամբ, բերել են նաեւ այն բանին, որ ենթադրյալ հանցագործություն կատարած անձն ազատվել է քրեական պատասխանատվությունից, եւ նրա մեղավորության հարցի առհասարակ քննության չի առնվել:

ՊՈԱԿ-ի անգործությունն իրականում շատ մտահոգիչ է եւ ենթակա է լուծման հենց դատական բարեփոխումների ծրագրերի շրջանակներում, քանի որ արդարադատության իրականացումն ու դատական վարույթի ողջ ընթացքը՝ թե՛ քրեական եւ թե՛ քաղաքացիական գործերով, պայմանավորված է նաեւ դատավարությանը օժանդակող այլ մարմինների անխափան ու պատշաճ աշխատանքով, եւ հենց այդ անխափան աշխատանքի ճիշտ կազմակերպման արդյունքում է, որ կապահովվի դատական համակարգի հեղինակության



բարձրացումը, ինչպես նաեւ մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պատշաճ իրացումը:

Այսպես, Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոմիտեից-այի 6-րդ հողվածով սահմանում է մարդու կարեւորագույն իրավունքներից մեկի՝ արդարացի դատական քննության իրավունքի իրականացման երաշխիքները, որի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են իր քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ իրեն ներկայացված քրեական մեղադրանքի հիմնավորվածությունը, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ եւ անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի ու հրապարակային դատաքննության իրավունք: Հատկանշական է, որ անձի որոշ իրավունքների պաշտպանությունը քրեական դատավարությունում նույնպես իրականացվում է քաղաքացիական իրավունքների եւ պարտականությունների իրականացման համատեքստում: Դրանք հենց այն դեպքերն են, երբ խախտվում են անձի /զոհի-տուժողի/ Կոնվենցիայով երաշխավորված իրավունքները, այսինքն՝ տուժողը կամ նրա իրավահաջորդը իրենց պատճառված վնասի հատուցման համար կարող են օգտվել Կոնվենցիայի 6-րդ հողվածի 1-ին կետով նախատեսված քաղաքացիական իրավունքների եւ պարտականությունների պաշտպանության ինստիտուտով:

Ի պատասխան իմ գրությանը՝ ՀՀ արդարադատության նախարարից ստացել են տեղեկություն առ այն, որ իրականացված վերահսկողական միջոցառումների արդյունքում պարզվել է, որ ՊՈԱԿ-ի համապատասխան աշխատակիցը անհիմն ձգձգել է տվյալ փորձաքննության կատարումը եւ դրա կատարման նկատմամբ իրականացրել է ոչ պատշաճ վերահսկողություն: Վերջինիս կողմից չեն կատարվել աշխատանքային պարտականությունները, կամ դրանց նկատմամբ անբարեխիղճ վերաբերմունք է ցուցաբերվել: Վերջինս նշված փորձաքննության ընթացքում թույլ է տվել Կենտրոնի տնօրենի 2006 թվականի մարտի 15-ի թիվ 29-Ն որոշումով հաստատված «Դատական փորձաքննությունների կատարման կազմակերպչական արդյունքում է, որ կապահովվի դատական համակարգի հեղինակության

նաեւ չի պահպանել նույն կարգի 32-րդ կետով սահմանված՝ փորձաքննությունների կատարման հերթականության կանոնները: Վերը նկարագրված ուսումնասիրության արդյունքում հայտնաբերված խախտումների հանգամանքի հիման վրա՝ աշխատակցի նկատմամբ 14.07.2022 թվականին կիրառվել է կարգապահական տույժ՝ նկատողություն:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ ՀՀ գլխավոր դատախազին ենթադրյալ հանցագործության մասին հարցադրում են ներկայացրել, քանի որ առկա է մտավախություն առ այն, որ թե՛ հիշյալ գործով, թե՛ առհասարակ, ՊՈԱԿ-ի կողմից փորձաքննությունների կատարումը անհիմն ձգձգելը կարող է պարունակել նաեւ կոռուպցիոն տարրեր:

ՊՈԱԿ-ի գործունեությանը վերաբերող խնդիրներին անդրադարձել էի նաեւ ամիսներ առաջ՝ Հանձնաժողովի նիստի ժամանակ՝ համապատասխան հարց ուղղելով ՀՀ արդարադատության նախարարին: Մասնավորապես՝ նախարարին էի հասցրել կոռուպցիայի վերաբերյալ ահազանգ, բարձրաձայնել, որ կան փորձագետներ, որոնք փորձագիտական կենտրոնում աշխատում են, նաեւ մասնավոր փորձագիտական ծառայություններ մատուցում, ասել է թե՛ պետության միջոցներով բիզնես են դրել: Նախարարը կարեւորեց իմ բարձրաձայնումը, ըստ էության համարեց այն կոռուպցիայի տեսակ է նշեց, որ նման կոռուպցիոն երեւույթները պետք է լինեն իրավապահ մարմինների ու շահերի պաշտպանության կենտրոնում: Նախարարը հավելեց, որ հիմա հավաստիացնում են իրենց, որ այլեւս ոչ մի փորձագետ այդ շահերի բախումով կոռուպցիայի մեջ թախսված չէ:

Ցավոք, նա այսօր ոլորտային խնդիրների լուծման ուղղությամբ գործուն քայլեր չեն ձեռնարկվել, քանզի տեսանելի արդյունքներ, ցավոք, չենք կարողանում արձանագրել:

ՊՈԱԿ-ի գործունեությունն ուղղակիորեն առնչվում է մարդու իրավունքներին եւ հիմնարար ազատություններին, հետեւաբար իմ իրավասությունների սահմաններում այսուհետ ՊՈԱԿ-ի գործունեությունն իմ խոշորացույցի տակ է լինելու: Հետեւողական եմ լինելու դեռ ամիսներ առաջ իմ կողմից բարձրաձայնված խնդիրների լուծման գործընթացին»:

ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՆՈՂ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Անվանագրության նկատառումներից ելնելով՝ Հայաստանում գտնվող ԱՄՆ ֆաղաբացիներին նախազգուշացրել է խուսափել որոշ վայրերից:

Խոսքը վերաբերում է այն վայրերին, որոնց վերաբերյալ երեկ երեկոյան Արտա-

կարգ իրավիճակների նախարարությունը պայթուցիկ սարքերի առկայության մասին ահազանգեր էր ստացել: Դրանք են «Զվարթնոց օդանավակայան»-ը, Երեւանի մետրոպոլիտենի բոլոր կայարանները, Երեւանի քաղաքապետարանի ու ՀՀ Ազգային ժողովի շենքերը: ԱՄՆ դեսպանա-

տունն իր քաղաքացիներին տեղեկացրել է, որ ներկայումս արտակարգ փրկարական ծառայությունները հետաքննում են «Զվարթնոց» օդանավակայանի, մետրոյի բոլոր կայարանների, քաղաքապետարանի եւ Ազգային ժողովի վերաբերյալ պայթուցիկ սարքերի սպառնալիքները:

ԻՐԱՎԱԿԱՆ

ՀՀ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆ

ԴԱՏԱՎՈՐԻ ՀՐԱԺԱՐԱԿԱՆԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Ուսագրավ իրավիճակ ՀՀ վերաքննիչ ֆրեական դատարանում: Երեկ հայտնի դարձավ, որ կալանքի սվող դատավորներից Տիգրան Սիմոնյանը հրաժարականի դիմում է ներկայացրել, եւ ԲԴԽ-ն բավարարել է դատավորի դիմումը, ու դատավորի լիազորությունները համարել են դադարեցված: Մակայն մինչ Տիգրան Սիմոնյանի հրաժարականի սալը վերաքննիչ ֆրեական դատարանում ուսագրավ զարգացումներ են եղել: Մասնավորապես, ArmLur.am-ի ժողովուրդային կայքէջում, Տիգրան Սիմոնյանի նկատմամբ կարգադատական վարույթի հարուցման դիմում է եղել: Իսկ ի՞նչն է եղել դատարանը: Բանն այն է, որ Առաջին ասյանի դատարանը մի ֆալսաբան կալանքի սանեղու դատախազի եւ քննիչի միջնորդությունը մերժել է: Արդյունքում դատախազն ու քննիչն այն բողոքարկել են ՀՀ վերաքննիչ ֆրեական դատարան, եւ կալանքի հարցը մակագրվել է դատավոր Սիմոնյանին:



Եվ, ահա, Սիմոնյանը բավարարել է դատախազի ու քննիչի որոշումը ու քաղաքացուն կալանքի է տարել: Այստեղից էլ սկսվել է «կռիվ կինոն»: Հաշվի առնելով, որ անձին ազատությունից զրկելու հարց է, ըստ լուրերի, դատավոր Սիմոնյանը պետք է քաղաքացու կալանքի ակտը շուտ տրամադրեր կալանավորված անձի պաշտպաններին, սակայն այդ որոշումը տրամադրել է 2 ամիս անց:

Ստացվում է, որ կալանավորված անձի պաշտպանները չեն ունեցել դատարանի ակտը, որ կարողանան այն բողոքարկել, ու ստիպված երկու ամիս սպասել են, ինչի հետևանքով իրենց պաշտպանային անհիմն երկու ամիսն մնացել է կալանքի տակ: Եթե դատավոր Տիգրան Սիմոնյանը ժամանակին տար կալանքի ակտը, միգուցե կալանավորված անձն այն բողոքարկեր Վճռաբեկ դատարան ու ազատության մեջ հայտնվեր:

Եվ, ահա, կալանավորված անձի պաշտպանական կողմն էլ այս գործելաոճի մասով դիմել է դատական համակարգ՝ Տիգրան Սիմոնյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու:

Այսքանով ամեն ինչ չի ավարտվում: ArmLur.am-ին հասած լուրերի համաձայն՝

Տիգրան Սիմոնյանը դիմում է ԲԴԽ եւ ասում, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանում բոլոր դատավորներն են ուշացնում կալանքի ակտերը: Բանը հասնում է ստուգումներին:

ԲԴԽ-ն մտնում է ստուգումների եւ ուշագրավ բացահայտում անում. բացահայտվում է մոտ 32 նմանօրինակ դեպք, որ անձի կալանավորման ակտերը դատավորները ուշացրել են մեկ, երկու ամսով, ու մարդիկ հնարավորություն չեն ունեցել իրենց անազատության մեջ գտնվելու հարցը բողոքարկել: Սակայն այստեղ ամենազարմանալիս այն է, որ ԲԴԽ-ն բացահայտում է, որ հիմնականում կալանքի ակտը շաբաթներով ուշ տվող դատավոր է եղել է հենց Տիգրան Սիմոնյանը:

Դատելով իրավիճակից՝ դատավոր Սիմոնյանը փորձում է արդարացնել իր գործողությունները, սակայն ԲԴԽ-ի բացահայտումը նրան ավելի վատ վիճակի մեջ է գցում: Ըստ մեզ հասած լուրերի՝ ԲԴԽ-ն այս հանգամանքը բացահայտելուց հետո նրա լիազորությունները կդադարեցնեն, սակայն Տիգրան Սիմոնյանն առաջ է ընկել եւ հասկանալով, որ չունի թիկունք, չկա ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի նախկին նախագահ Տիգրան Սահակյանը, որ մտներ ԲԴԽ եւ բարեխոսեր իր համար, որոշել է ինքը դիմում ներկայացնել եւ ազատվել պաշտոնից: Փորձեցինք տեղեկություններ ստանալու համար կապ հաստատել դատավորի հետ, սակայն մեր փորձերը անցան ապարդյուն: **ՔՆՆՐ ՍՆՆՈՒԿՅԱՆ**

ԿՔՆՆՎԻ ՎԱՐՈՒՅԹԸ

ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՄԱՐՎԱՆ ԳՈՐԾՈՎ ՈՐՈՇՈՒՄ

ArmLur.am-ի ժողովուրդային կայքէջում համաձայն որոշյալեր Արմեն Գրիգորյանի մահվան գործով ՀՀ քննչական կոմիտեի որոշում է կայացրել ֆրեական գործը Երևանից ժողովուրդային կայքէջում մարզի քննչական բաժնի քննությունը այնտեղ շարունակելու համար:

Գրել էինք, որ տեղական ժամանակ քննարկում է, թե որ բաժինը քննի վերջինիս մահվան փաստի առթիվ հարուցված քրեական վարույթը: Մասնավորապես, քննարկվում է քրեական վարույթը քննել Արմավիրի մարզում, թե այն տեղափոխել էրեւան, եւ քննությունը շարունակել էրեւանում:

Հիշեցնենք, որ ArmLur.am-ի տեղեկությունների համաձայն՝ նախաքննական մարմինը դիմել է «Արմավիր» քրեակատարողական հիմնարկին եւ կոնկրետ փաստաթղթեր պահանջել վերջինիս

առողջական խնդիրների եւ խցում գտնվելու պայմանների մասին:

Ավելին, մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ նախաքննական մարմինը կհարցաքննի քրեակատարողական հիմնարկի բուժաշխատողներին՝ հասկանալու համար, թե քրեակատարողական հիմնարկում Արմեն Գրիգորյանի ճնշումը չափել են արդյոք, առողջական վիճակը ստուգել են եւ հետո ուղարկել դատարան:

Ըստ էության, իրավապահ համակարգը կփորձի այս քննության ընթացքում հասկանալ, թե բուժաշխատողի կողմից մասնագիտական պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու որեւէ հանգամանք կա, թե ոչ, սակայն հիմնական հարցը կմնա օդից կախված:

Իրավապահների համար քննության առարկա չի դառնա ամենակարեւոր հարցը՝ արդյոք Արմեն Գրիգորյանի կալանավորումը հիմնավոր էր, թե ոչ:

Հիշեցնենք, որ Արմեն Գրիգորյանը մահացել է հուլիսի 15-ին դատարանի դահլիճում: Երեւանի ընդհանուր իրավասության դատարանի «Կենտրոն» նստավայրում նրա գործով նախնական դատախազների ժամանակ Արմեն Գրիգորյանը հանկարծ կորցրել էր գիտակցությունը եւ ընկել աթոռից: Կարճ ժամանակ անց հայտնի էր դարձել, որ Արմեն Գրիգորյանը մահացել է:

Արմեն Գրիգորյանը պահվում էր անազատության մեջ մայիսի 17-ից, պրոդյուսեր Արմեն Գրիգորյանի մահվան դեպքի առթիվ քրեական վարույթ է նախաձեռնվել:

Քրեական վարույթը նախաձեռնվել է ՀՀ ՔՕ 187-րդ հոդվածով: Քրեական օրենսգրքի 187-րդ հոդվածը վերաբերում է բուժաշխատողի կողմից մասնագիտական պարտականությունները չկատարելուն կամ ոչ պատշաճ կատարելուն:

ԼՈՒՐԵՐ

ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ

Հուլիսի 29-ին ողբերգական դեպք է տեղի ունեցել Երեւանի Շենգավիթ վարչական շրջանում գործող Հով. Հովհաննիսյանի անվան թիվ 52 հիմնական դպրոցում:

Այդ օրը Երեւանի շտապօգնության թիվ 62 խումբը «պոլիտրավմա» օպտորոշմամբ հիվանդանոց է տեղափոխել մի քաղաքացու, այնուհետեւ շտապօգնության խումբը ոստիկանության Շենգավիթի բաժնի հայտնել է, որ այդ քաղաքացին մահացել է: Ոստիկաններն ու քննիչները պարզել են, որ մահացածը Երեւանի բնակիչ 77-ամյա Զուլալ Ս-ն էր: Դեպքի փաստով քննչական բաժնում նախաձեռնվել է քրրական վարույթ, քննիչի որոշմամբ Նշանակվել են մի շարք փորձաքննություններ, այդ թվում՝ դիակի դատաբժշկական:

ԳԱՆԱԿԻ ՄՊԱՌՆԱԼԻՔՈՎ

Հուլիսի 24-ին ոստիկանություն դիմած արտասահմանցի հայտնեց, որ ժամը 2-ի սահմաններում իր երկու ընկերների հետ եղել է Կասկադի աստիճանահարթակի վերին հատվածում, երբ իրենց են մոտեցել երկու երիտասարդ: Նրանցից մեկը, որի ձեռքին դասակ է եղել, պահանջել է փող ու ոսկի: Իրենք տվել են ոսկյա մատանի եւ արծաթյա շղթա: Դրանից հետո անձանքների սպառնալիքների տակ մոտեցել են Ազատության պողոտայի բանկոմատներից մեկին, եւ արտասահմանցիներից մեկը կանխկազմել է 18 հազար դրամ, տվել անձանքներին, ինչից հետո նրանք հեռացել են:

Ոստիկանության Քանաքեռ-Զեյթունի բաժնի ծառայողները պարզեցին, որ օտարերկրացիներին մոտեցել ու ավազակություն են արել Գեղարքունիքի մարզի երկու բնակիչ: Շուտով ճշտվեց նաեւ նրանց ինքնությունը. Մարտունի քաղաքի 23-ամյա, եւ Ներքին Գետաշեն գյուղի 20-ամյա բնակիչներ:

Դեպքից 5 օր անց՝ հուլիսի 29-ին, նրանցից մեկը հայտնաբերվեց Երեւանում, իսկ մյուսը՝ Մարտունիում:

ՉԵՐԲԱԿԱԼԵԼ ԵՆ

Արտաշատի բաժնի պարեկապահակետային ծառայության դասակի ոստիկանները, ապօրինի թմրամիջոց պահելու եւ օգտագործելու կասկածանքով, Արտաշատ քաղաքում ձերբակալել են բաժնի են բերել Հայաստան գյուղի բնակիչ, 18-ամյա մի երիտասարդի: Անձնական խուզարկությամբ հայտնաբերվեց կանեփաման սուր հոտով զանգված՝ մոտ ութ գրամ: Երիտասարդը ներկայացվել է Արարատի մարզային քննչական վարչություն: Նախաձեռնվել է քրեական վարույթ: Նշանակվել է փորձաքննություն: Հանգամանքները պարզվում են:

● Ըստ ոստիկանության տվյալների՝ օգոստոսի 2-ից 3-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել են հանցագործության 61 դեպք, որոնցից 4-ը՝ նախկինում կատարված:

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԿՈՍՄՈՍԻՍ ԸՆԴԳԻՄԱԳԻՐՆԵՐԻ ՀԵՏ

Օգոստոսի 2-ին Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի հռչակում քաղաքի նստավայրում նշանակված էր Բերդ խոշորացված համայնքի ղեկավար Հարություն Մանուչարյանի դատավարության հերթական նիստը: Հ. Մանուչարյանի պաշտպան Արման Թամրազյանը հայտնեց, որ նիստը չի կայացել, ինքը եւ Հ. Մանուչարյանի մյուս պաշտպան Հայկ Ալումյանը դատական նիստին չեն ներկայացել: Սույն դատավարության հաջորդ նիստի օրը հայտնի չէ: Նախկինում այս դատավարությունը վարում էր Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի դատավոր Զոյա Զաքինյանը, սակայն նա իրեն ինքնաբացարկ է հայտնել, դատը վարում է դատավոր Սամվել Մարգարյանը: Հ. Մանուչարյանին մեղադրանք է առաջադրվել Քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին (Պաշտոնեական լիազորությունները չարաշահելը) եւ 314-րդ մասին 1-ին մասերի հատկանիշներով (Պաշտոնեական կեղծիքը):

Հ. Մանուչարյանն իրեն առաջադրված մեղադրանքը չի ընդունում: Հ. Մանուչարյանն անազատության մեջ է 2021 թվականի նոյեմբերի 9-ից: Բերդ համայնքի ղեկավարին կալանավորելը շատերի կողմից դիտարկվում է որպես պատիժ իշխանությունների կողմից: Հ. Մանուչարյանին պատժել են նրա համար, որ նա 2020 հունիսի 20-ի խորհրդարանական ընտրությունների ժամանակ գործող իշխանություններին չի սատարել: 2022թ. սեպտեմբերի 25-ին նշանակված են Բերդ խոշոր համայնքի ավագանու համամասնական ընտրակարգով հերթական ընտրություններ: ՔՊ-ական իշխանությունը ծրագիր է մշակել սեպտեմբերի 25-ին Հ. Մանուչարյանին հարթելու համար, որի էությունը ընտրողների ձայները կուսակցությունների միջեւ փոշիացնելը եւ ընտրություններից հետո կոալիցիայով ՔՊ-ի ավագանու թեկնածուների ցանկի առաջին համար, Բերդի միասնական սոցիալական ծառայության տնօրեն Վահրամ Սուքիասյանին խոշորացված համայնքի ղեկավար ընտրելն է:

Բերդից «Ժողովուրդ» օրաթերթ ստացված տեղեկություններով՝ «Ապրելու երկիր» կուսակցության թեկնածուների ցանկը հավանաբար կգլխավորի Սոնա Մարայանը, որը Չորաթանի գյուղապետարանում աշխատել է որպես համակարգչային մասնագետ, մոտ երկու ամիս առաջ աշխատանքից ազատվել է: ԱԺԲ-ի թեկնածուների ցանկը, իմ տեղեկություններով, կգլխավորի Աշոտ Մելիքյանը, որը նախկինում Բերդում գործող ձեռնոցների գործարանի հերթափոխի պետ է եղել: Թեեւ թեկնածուների առաջադրումը պաշտոնապես չի սկսվել, սակայն Բերդից հայտնում են, որ ավագանու ապագա թեկնածուներն ընտրողների ձայների համար արդեն տնտեսում են անում: Մինչեւ սեպտեմբերի 25-ը կուսակցությունների կամ թեկնածուների մասնակցության հարցում կարող են որոշ փոփոխություններ լինել:

ՈՍՎԱՆ ՍՈՐՈՍՅԱՆ
Տավուշ

ՄԱՐԶԱՆԻՆ

ՄԻՊ ՓԱՍՏԱԿՆԱՎԱՔ ԱՅՑԸ

Մարդու իրավունքների դաշտումն այցելել է Վարդենիս, Կուք, Սոթք, Նորաբակ, Վերին եւ Ներքին Շորժա բնակավայրեր, ինչպես նաեւ Վերին Շորժայի սարստեղի: Քրիստինե Գրիգորյանի փաստահավաք այցը մեկնարկել է Պեղարձուցիչի մարզղես Կարեն Մարգարյանի հետ հանդիպմամբ:



Մարդու իրավունքների պաշտպանը Վարդենիս համայնքի ղեկավարի ուղեկցությամբ այցելել է Վերին եւ Ներքին Շորժա բնակավայրեր, հանդիպել բնակիչների հետ: Մարդիկ Պաշտպանին մտահոգություն են հայտնել, հիմնականում անվտանգային հարցերի վերաբերյալ: Նշել են, որ աղբբեջանական անօրինական տեղակայումների պատճառով չեն կարողանում օգտագործել իրենց հողատարածքները, խոտհարքները, արոտավայրերը: Գործնականում ծայրաստիճան դժվարացել, իսկ որոշ դեպքերում անհնարին է դարձել իրենց համար սեփականության իրավունքի իրացումը:

Նորաբակ սահմանամերձ համայնքում բնակիչների հետ հանդիպման ընթացքում բարձրաձայնվել են նախեսառաջ անվտանգության ապահովման հարցեր: Բնակիչներն առաջնահերթ են համարել նաեւ խմելու եւ ոռոգման ջրի հասանելիության հարցը, ինչպես նաեւ նշել, որ խոտհարքների եւ արոտավայրերի կրճատման պատճառով գրեթե անհնար է դարձել անասնապահությամբ զբաղվելը, էականորեն պակասել է անասնազխաբանակը: Բարձրացվել են նաեւ համայնքի վարելահողերից հենց համայնքի բնակիչների կողմից օգտվելու հետ կապված խնդիրներ:

Կուքի բնակիչները նշել են նաեւ առաջնային լուծում պահանջող խմելու եւ ոռոգման ջրի մատակարարման, միջհամայնքային տրանսպորտի հասանելիության, գյուղի ճանապարհի վերանորոգման եւ լուսավորության ապահովման հարցերը: Ռեռես լուծում չի ստացել անցյալ տարի աղբբեջանական զինված ուժերի վերահսկողության տարածք անցած ու չվերադարձված Կուքի բնակիչներին պատկանող ավելի քան 80 գլուխ խոշոր

եղջերավոր անասունների փոխհատուցման հարցը:

Սոթքում մշտադիտարկման այցի ընթացքում բնակիչները Պաշտպանին մտահոգություն են հայտնել անվտանգային եւ զբաղվածության ապահովման խնդիրների վերաբերյալ: Բացի այդ, նշել են, որ Սոթքի ոսկու հանքավայրի աշխատատեղերի կրճատման պատճառով համայնքի բնակիչները հայտնվել են գործազուրկ մնալու վտանգի առջեւ: Բնակիչները հայտնել են, որ աղբբեջանական ներխուժումներից հետո բնակավայրում մարդկանց բնականոն կյանքը խաթարվել է, դժվարությամբ են կարողանում կենսական կարիքները իրագործել, ունեն խմելու եւ ոռոգման ջրի խնդիր, արոտավայրերի պակասի պատճառով չեն կարողանում անասնապահությամբ զբաղվել:

Փաստահավաք աշխատանքների արդյունքում արձանագրված խնդիրները, ինչպես նաեւ բնակիչների կողմից բարձրացված հարցերը ընկալվել են համայնքապետարանի ներկայացուցիչների հետ, որոնք նշել են, որ մի շարք հարցեր արդեն իսկ լուծման ընթացքի մեջ են:

Պաշտպանի այցելած բոլոր համայնքներում բնակիչները պատմել են աղբբե-

ջանական զինված ուժերի կողմից համայնքի բնակիչներին մշտական վախի մեջ պահելու եւ վնասարարությամբ զբաղվելու դեպքերի մասին, որոնք համակարգված ու միատեսակ ձեռագրով իրականացվող գործողություններ են: Մասնավորապես՝ աղբբեջանական զինված ուժերը մեծ ծավալներով այրում են գյուղացիների հնձած խոտը, գողանում մեծ ու մանր եղջերավոր անասուններ, կրակում իրենց դիրքերին մոտ գյուղատնտեսական աշխատանքներ իրականացնող բնակիչների ուղղությամբ, որոնք մշակում են սեփականությամբ իրենց պատկանող հողը, գիշերային ժամերին լուսարձակներով թիրախավորում բնակիչների տների պատուհանները, թռչող անօդաչու սարքեր կիրառում համայնքների օդային տարածքներում գիշեր թե ցերեկ:

Նկարագրված գործողությունները վկայում են, որ իրենց բնակավայրերում համայնքների կյանքն անհնարին դարձնելուն միտված աղբբեջանական զինված ուժերի այս հանցավոր գործողությունները կրում են շարունակական, համակարգված ու մեկ կետից ղեկավարվող բնույթ:

ԱՊՕՐԻՆԻ ԱՐԳԵԼԸ

ԲՈՂՈՔԻ ԱԿՑԻԱ Է ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼ

«Հայ հեղափոխական դաճակցության» Հայաստանի երիտասարդական միությունը բողոքի ակցիա է անցկացրել Հայաստանի արտաքին գործերի նախարարության շենքի դիմաց՝ ընդդեմ սփյուռփակների՝ Հայաստան մուտք գործելու արգելիչի:

«Սա պատմական խայտառակություն է հայ ժողովրդի եւ Հայաստան-Արցախ-սփյուռք եռամասնության համար», - ակցիայի ժամանակ ունեցած ելույթում ասաց «Երիտասարդի ձայնը» հասարակական նախաձեռնության ղեկավար Հովհաննես Հարությունյանը:

«Երիտասարդի ձայնը» հասարակական նախաձեռնության ղեկավար Հովհաննես Հարությունյանը բողոքի ակցիային ժամանակ շեշտել է, որ Արտաքին գործերի նախարարությունը կոչվել է ներկայացնելու Հայաստանի ու հայ ժողովրդի շահերը արտաքին հարաբերու-

թյուններում, բայց տարիներ շարունակ իրականացնում է Թուրքիայի ու Ադրբեջանի շահերից բխող քաղաքականություն:

Ազգային ժողովի «Հայաստան» խմբակցության անդամ, ՀՀԳ-ական Քրիստինե Վարդանյանն էլ լրագրողների հետ զրույցում հայտարարեց, որ այսօր աշխարհում երկու մարդ կա, որոնք հայերի սեւ ցուցակ ունեն՝ Նիկոլ Փաշինյանն ու Իլհամ Ալիևը:

«Բայց շատ կարեւոր է հասկանալ, թե ինչու է հենց հիմա սա կատարվում, եւ ինչու են հենց այս մարդկանց նկատմամբ կատարվում հետապնդումները», - ասաց նա: - Մենք այստեղից էլ կարող ենք հասկանալ, որ Հայաստանի Հանրապետության իշխանությունները, չբավարարվելով նոյեմբերի 9-ի հայտարարությունով, գնում են նոր նոյեմբերի 9-ի հետեւից: Եվ հիմա որպեսզի իրենք կարողանան այդ ծրագիրը հաջողել, կարողանան այդ

փակ, վերելակային, հեռախոսային բաժնակցությունների ընթացքում ձեռք բերած պայմանավորվածություններն իրականացնել, պետք է մարդկանց, որոնք ունակ են համազգային դիմադրություն ձեւավորելու ու վիժեցնելու այդ նոր նոյեմբերի 9-ը եւ դրա արդյունքում Արցախի ու Հայաստանի հայաթափումը, մեկուսացնեն, այդ մարդկանց մուտքը Հայաստան պետք է արգելեն»:

Որպես հիշեցում ասեմ, որ վերջին օրերին երեք սփյուռքահայ դաշնակցական գործիչների թույլ չի տրվել մուտք գործել Հայաստան: Խոսքը ՀՀԳ Բյուրոյի անդամ, Ֆրանսիայի հայկական կազմակերպությունների համակարգող Մուրադ Փափազյանի, ՀՀԳ Նիդեռլանդների Հայ Դատի ատենապետ Մասիս Աբրահամյանի եւ «Գարեգին Նժդեհ» երիտասարդական միության անդամ Սյունե Աբրահամյանի մասին է:

● Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 11 ՃՏՊ. 14 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

«ՎՏԲ-ՅԱՅԱՍՏԱՆ» ԲԱՆԿ

ՀԵՌԱՀԱՐ ՀԱՄԱՆԵԼԻ ԿԼԻՆԵՆ

Տեղեկացնում ենք, որ, «ՎՏԲ-Յայաստան Բանկ» ՓԲԸ-ի թվայնացման ել...

Նշված մասնաճյուղերում տեղադրված են Cash-in/Cash-Out բանկոմատներ, որոնք միջոցով կարելի է կատարել բանկային գործառնություններ...

«Ջերմուկ» մասնաճյուղի բոլոր հաճախորդների, ինչպես նաև նրանց ակտիվների ել պարտավորությունների սպասարկումը, 2022թ. օգոստոսի 10-ից սկսած...

«Թիվ 4» մասնաճյուղի բոլոր հաճախորդների, ինչպես նաև նրանց ակտիվների ել պարտավորությունների սպասարկումը 2022թ. օգոստոսի 10-ից սկսած...

Բացի նշված մասնաճյուղերից, հաճախորդները կարող են սպասարկվել «ՎՏԲ-Յայաստան Բանկ» ՓԲԸ-ի ցանկացած այլ մասնաճյուղում:

Մանրամասն տեղեկատվություն ստանալու համար կարող եք զանգահարել 87 87 հեռախոսահամարով:

Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման ել փորձաքննության մասին» ՀՀ օրենքի /21.06.2014թ. 30-110-Ն/, ինչպես նաև ՀՀ կառավարության 19.11.2014թ. N 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով (առաջին փուլ) 2022 թ. օգոստոսի 15-ին՝ ժամը 11.00-ին, Գ. Նժդեհի փողոց հ. 26 հասցեում (վարչական շրջանի շենք) տեղի կունենան «Լեքս տոբակո քամփին» ՍՊԸ կողմից Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջան, Արշակունյաց պողոտա 127/61 հասցեում նախատեսվող պահեստային մասնաշենքի կառուցման՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ հանրային քննարկումներ: Հարցերի դեպքում զանգահարել 099991155 հեռախոսահամարով:

ԿՈՌՈՒՊՑԻԱ

ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՄԻՐՈՒԹՅՈՒՆ

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի բարեվարձության վերաբերյալ ուսումնասիրությունների իրականացման վարչությունը 2022 թվականի առաջին կիսամյակում իրականացրել է ղեկավար գրասենյակի հավակնող 261 անձի բարեվարձության ուսումնասիրություն: Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամ Մարիամ Գալստյանը հարցուղասախմանի ձեռնարկով ներկայացրել է կատարված աշխատանքը:



2022 թվականի առաջին կիսամյակում Հանձնաժողովի կողմից իրականացվել է պետական պաշտոնի հավակնող 261 անձի բարեվարձության ուսումնասիրություն, ինչի արդյունքում համապատասխան մարմիններ է ներկայացվել 257 խորհրդատվական բնույթի եզրակացություն: 4 անձի վերաբերյալ իրականացվել է բարեվարձության ուսումնասիրություն, սակայն բարեվարձության խորհրդատվական բնույթի եզրակացություններում անձանց բարեվարձության վերջնական գնահատական չի տրվել վերջիններիս կողմից ներկայացված հարցաթղթի վերաբերյալ հանդիսացող տվյալների բացակայության պատճառով:

261 եզրակացությունից 149-ը եղել են դրական, 29-ը՝ բացասական, 78-ը՝ դրական վերապահունով: 1 անձի վերաբերյալ որոշում չի կայացվել Հանձնաժողովի անդամների ձայների հավասար բաշխվելու հետևանքով:

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից ներկայացված բարեվարձության եզրակացությունների արդյունքներով համապատասխան ցուցակներում թեկնածուներին ընդգրկելու վերաբերյալ տվյալներն ամբողջական ամփոփված չեն՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ առանձին դեպքերում ցուցակների համալրման նպատակով հարցազրույցներ դեռևս չեն իրականացվել:

Ներկայացված եզրակացություններից 34-ը վերաբերում են Հակակոռուպցիոն դատարանի դատավորի թեկնածուներին, 14-ը՝ վերաքննիչ քաղաքացիական դատարանի քննությունների արդյունքները, ամփոփիչ տվյալները, անդրադարձել հեռակա ուսուցմամբ ընդունելության կարգի փոփոխությանը:

ԼՈՒՐԵՐ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

2022 թվականի օգոստոսի 16-ին՝ ժամը 11:00-ին, Չարենցավանի համայնքապետարանի նիստերի դահլիճում կկայանա «Հովիթեր» ՍՊԸ-ի կողմից նախատեսվող «Արգել ՓԲԸ»-ի կառուցման 2 շահագործման աշխատանքների՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ առաջին հանրային քննարկումը: Փաստաթղթերին ծանոթանալու համար զանգահարել 098 57 77 77 հեռախոսահամարով:

2022-2023 ԹՎԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի ել սպորտի նախարարության բարձրագույն ել հետազոտական մասնագիտական կրթության վարչության պետ Լուսինե Գրիգորյանը «Արմենպրես» լրատվական գործակալությունում կայացած մամուլի ասուլիսում ներկայացրել է 2022-2023 ուսումնական տարվա բուհերի ընդունելու թյուններին մասնակցել է 11.587-ը, բուհ ընդունվել է 9729 դիմորդ, որից 1670-ը՝ անվճար: Թափուր է մնացել 14.158 տեղ, որից 13.900՝ վճարովի, 258-ը՝ անվճար: Ըստ բանախոսի՝ թափուր տեղերը հիմնականում ոչ պետական բուհերում են, որոնց հատկացված է եղել 7500 տեղ, որից համալրվել է 131-ը: «Ինչպես նախորդ տարիներին, այս տարի ել ամենաշատ դիմորդների թվով առաջնագծում էին մի քանի հիմնական մասնագիտություններ՝ Իրավագիտություն, Բուժական գործ, Միջազգային հարաբերություններ, Հանրային կառավարում, Կիրառական մաթեմատիկա ել այլն: Նախորդ տարվա համեմատ՝ կրկին թափուր են մնացել մասնագիտություններ, որոնք աշխատաշուկայում պահանջարկ ունեն, առաջնային են, սակայն ցածր գրավչություն ունեն, ել նույնիսկ անվճար տեղերի համար դիմորդներ չեն եղել: Դրանք հիմնականում բնագիտական մասնագիտություններն են՝ Քիմիա, Աշխարհագրություն, Երկրաբանություն, Քիմիական տեխնոլոգիաներ», - իրազեկել է Լուսինե Գրիգորյանը:

տարանում հակակոռուպցիոն քաղաքացիական գործերով բողոքարկման ենթակա դատական ակտերի վերանայում իրականացնող դատավորների թեկնածուներին, 20-ը՝ վերաքննիչ քրեական դատարանում կոռուպցիոն հանցագործությունների գործերով բողոքարկման ենթակա դատական ակտերի վերանայում իրականացնող դատավորների թեկնածուներին, 45-ը՝ Կճռաբեկ դատարանի դատավորի թեկնածուներին, 100-ը՝ դատախազների թեկնածուներին ցուցակում ընդգրկվել հավակնող անձանց, 15-ը՝ դատախազների առաջնադաս ցուցակում ընդգրկվել հավակնող դատախազի թեկնածուներին, 1-ը՝ Գլխավոր դատախազի թեկնածուին, 32-ը՝ Հակակոռուպցիոն կոմիտեի օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող ստորաբաժանման պաշտոններում նշանակվել հավակնող թեկնածուներին:

Թեկնածուների բարեվարձության վերաբերյալ դրական վերապահունով եզրակացություններ հիմնականում ներկայացվել են հետեյալ դեպքերում:

բարեվարձության հարցաթղթիկում ել հայտարարագրերում ներկայացված տվյալների, ինչպես նաև հանձնաժողովին հասանելի այլ պաշտոնական աղբյուրներից ստացված տեղեկությունների համադրման արդյունքներով դուրս են բերվել թեկնածուների գույքային դրության վերա-

բերյալ որոշակի անհամապատասխանություններ, որոնք առանձին-առանձին թեկնածուներին բացասական գործոն չեն դիտարկվել, սակայն իրենց համակցության մեջ ձեւավորել են թեկնածուի ել նրա ընտանիքի անդամի գույքային դրության վերաբերյալ անարժանահավատություն ել ռիսկ: Միաժամանակ, բոլոր այն դեպքերում, երբ արձանագրված գույքային անհամապատասխանությունների վերաբերյալ թեկնածուների ներկայացրած պարզաբանումները չեն փարատել հանձնաժողովի մոտ առկա մտահոգությունները, բայց նաեւ բավարար չեն եղել բացասական գնահատականի ձեւավորման համար, հանձնաժողովը դրանք նույնպես գնահատել է որպես բարեվարձության գնահատականի վրա ազդող գործոն:

Թեկնածուների բարեվարձության վերաբերյալ բացասական եզրակացություններ հիմնականում ներկայացվել են հետեյալ դեպքերում:

թեկնածուների՝ կարգապահական պատասխանատվության ենթարկված լինելու ել դրանց վերաբերյալ բարեվարձության հարցաթղթիկում տվյալներ չներկայացնելու դեպքում, հատկապես հաշվի առնելով կարգապահական տույժերի քանակը, խախտման բնույթը, տույժի խիստ տեսակը, ինչպես նաև կարգապահական տույժերը վերջին տարիներին կիրառված լինելու հանգամանքները, հանձնաժողովի կողմից գնահատվել են որպես բարեվարձության գնահատականի վրա ազդող գործոն:

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից արդեն իսկ իրականացվում է Հակակոռուպցիոն կոմիտեի օպերիվագործների թեկնածուների բարեվարձության ուսումնասիրություն, ինչի արդյունքում բարեվարձության վերաբերյալ խորհրդատվական եզրակացություններ են տրամադրվում թեկնածուների վերաբերյալ: Միաժամանակ, «Հակակոռուպցիոն կոմիտեի» մասին օրենքի կարգավորումներին համապատասխան՝ առաջիկայում կիրականացվի նաև Հակակոռուպցիոն կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց՝ քննիչների բարեվարձության ուսումնասիրություն:


«Շողովուրդ» օրաթերթում ել ArmLur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԿԱՐԾԻՔ

ՇՆՈՐՀԱՆՈՒՄ

ԳԻՐՔ՝ «ՀԱՂԹԵՑԻՆ ԱՊՐԵԼՈՎ»

Գյումրիի Ամերիկյան անկյունում սեղի է ունեցել Աճի Մանուկյանի «Հաղթեցին ապրելով» գրքի շնորհանդեսը: Գիրքը Հայոց Մեծ եղեռնը վերադարձնելու հայ աղջիկների մասին է, որոնք անցնելով մահասարսուռ ճանապարհներով ի վերջո իրենց փրկությունը գտան Ալեքսանդրապոլ/Լեհինակա նում Մերձավոր Արևելքի Նոստրոմայի ամերիկյան կոմիտեի հիմնած Պոլիգոնի, Կազաչի ու Մեներսկի դուստրի որբանոցներում:



Գրքում գետնեղված են երեսուներորդ աղջիկների կյանքի իրական պատմություններ, որոնք համեմատել են Հայաստանի ազգային դիվանում պահվող նյութերով, ժառանգների տրամադրած լուսանկարներով, ձեռքի աշխատանքներով, անձնական փաստաթղթերով:

«Գրքում գետնեղված է նաև իմ սեփական տատիկի պատմությունը: Ես վարուց էի մտածում որբանոցում մեծացած սաների ճակատագրի մասին գրել ու որոշեցի իմ շուրջ հավաքել որբանոցում մեծացած աղջիկների հարազատներին: Ուղի-հանուր առմամբ, գրքում ընդգրկված է 34 հուշագրություն: Յուրաքանչյուր պատմության սկզբում նկարագրվում է հանդիպումը ժառանգի հետ: Ամեն գրույցից հետո կարծիք է արտահայտվում, որբերի եւ նրանց անձնական իրերի լուսանկարներով, Հայաստանի ազգային դիվանում պահվող փաստաթղթերով:

Այդ աղջիկների պատմությունը ցույց է տալիս ցեղասպանության դաժանությունն ու վերապրածների անկտորում ոգին»,- ընդգծեց հեղինակը, որն ինքը եւս Ալեքսանդրապոլի Պոլիգոնի ամերիկյան որբանոցում մեծացած Փիրուզայի թոռնուհին է:

ՄԱՐԶԱԿԱՆ ԽԱՂԵՐ

ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ՄԵՂԱԼ ԵՆ ՆՎԱՃԵԼ

Հայաստանի ուսանողական մարզական ֆեդերացիայի 6 մարզիկներ Լեհաստանի Լոժ քաղաքում օրերս մասնակցել են Եվրոպական համալսարանական 6-րդ խաղերին եւ 2 մեդալ նվաճել՝ 1 ոսկե եւ 1 բրոնզե: Այս մասին տեղեկացնում է ՀՀ ԿՊՄՆ-ն:



Եվրոպական համալսարանական խաղերի չեմպիոն է դարձել Երեւանի պետական բժշկական համալսարանի ուսանող Դավիթ Մակյանը՝ կարատե մարզաձևի կումիտե մրցակարգի միջև 75 կգ քաշային կարգում նվաճելով ոսկե մեդալ: Դավիթը 5 մենամարտ է անցկացրել եւ հաղթանակներ տարել: Կումիտե մրցակարգում Հայաստանը ներկայացրել է նաև Անիտա Մակյանը՝ դարձյալ ԵՊԲԳ-ից:

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի պատվիրակության կազմում էլ ընդգրկված են եղել երկու շախմատիստներ, որոնք, չլինելով գրոսմաստերներ եւ ունենալով միայն առաջին կարգ, 20 թիմերի շարքում տեղ են զբաղեցրել լավագույն տասնյակում, իսկ Զանիկ Ղուլյանը բլից մրցաշարում 40 մասնակիցների շարքում զբաղեցրել է 7-րդ տեղը:

Հայաստանը, ընդհանուր առմամբ, ներկայացված է եղել 3 բուհերի պատվիրակություններով: Բացի Երեւանի պետական բժշկական համալսարանից, թիմեր են ներկայացրել նաև Երեւանի ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի պետական ինստիտուտը, ինչպես նաև Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը:

Հայաստանի մարզական ուսանողական ֆեդերացիայի նախագահ Հովհաննես Գաբրիելյանը, որը նաև Եվրոպական համալսարանական սպորտի ասոցիացիայի նախագահության անդամ է, բարձր է գնահատում հայ մարզիկների մասնակցությունը. «6 մարզիկով 2 մեդալ ենք նվաճել, որից մեկը՝ ոսկե: Միանշանակ գոհացող արդյունք է: Մասնակից 38 երկրներից երեւի 10-15 երկիր է մեդալ նվաճել, եւ մենք այդ երկրների թվում ենք: Երկրներ կան, որոնք 400-500 պատվիրակությամբ էին մասնակցում եւ ընդամենը մի քանի մեդալ են նվաճել»:

ՀԳԿՄԻ-ի պատվիրակությունը 2022 թվականի Եվրոպական համալսարանական խաղերից վերադարձել է մեկ բրոնզե մեդալով, որը պարա սեղանի թենիս մարզաձևում նվաճել է Գեորգ Բեգլարյանը: ՀԳԿՄԻ մյուս ներկայացուցիչ, ծյուրոխտ Մերուժան Սարգսյանն էլ գրավել է 5-րդ հորիզոնականը: ՀԳԿՄԻ պատվիրակությունը խաղերին մասնակցել է ռեկտոր Դավիթ Խիթարյանի գլխավորությամբ:

● Օգոստոսի 8-ին «Բոհեմ» թատրոնում տեղի կունենա «ԳործՉկա» հումոր-սթենդապիլը: Տոմսերի արժեքը՝ 2000-5000 դրամ: Սկիզբը՝ ժամը 19:30-ին:

ԼՈՒՐԵՐ

ՆՈՐ ԿԱՐԻԵՐԱՄ «ՄԵՎԻԼԻԱՅՈՒՄ»

Անգլիական «Մանչեսթեր Յունայթեդի» պաշտպան Ալեքս Տելեսը կարիերան կշարունակի «Մեվիլիայում»: 29-ամյա ֆուտբոլիստը վարձակալությամբ կխաղա իսպանական թիմում: Պայմանագիրը նախատեսված կլինի մինչև հաջորդ մրցաշրջանի ավարտը:

Անցած մրցաշրջանում Ալեքս Տելեսը մանչեսթերյան թիմի հետ մասնակցել է 26 հանդիպման, խփել 1 գոլ, կատարել 4 գոլային փոխանցում: Transfermarkt-ը Ալեքս Տելեսի տրանսֆերային արժեքը գնահատում է 18 միլիոն եվրո:

ՄԵՐԺԵԼ Է «ՅՈՒՎԵՆՏՈՒՄԻՆ»

Իտալական «Նապոլիից» ազատ գործակալի կարգավիճակում հեռացած բելգիացի հարձակողական կիսապաշտպան Դրիս Մերտենսը մերժել է Թուրինի «Յուվենտուսին», որը նրան առաջարկել է երկու տարվա պայմանագիր՝ հինգ միլիոն եվրո տարեկան աշխատավարձով:

35-ամյա ֆուտբոլիստը մտադիր չէ հանդես գալ տիտոյի համար պայքարում «Նապոլիի» հիմնական մրցակիցներից մեկի կազմում:

Դրիս Մերտենսը «Նապոլի» էր տեղափոխվել 2013 թվականին հոլանդական «ՊՍՎ Էյնդհովենից»: Այս ընթացքում նա Նեապոլյան թիմի հետ մասնակցել է 397 հանդիպման, խփել 148 գոլ՝ դառնալով ակումբի բոլոր ժամանակների լավագույն ռմբարկուն:

ԱՃՈՒՐԳԸ ԿԿԱՅԱՆԱ 27-ԻՆ

Silverstone աճուրդի տունը աճուրդ կանցկացնի, որի ընթացքում կառաջարկի արքայադուստր Դիանային պատկանող 1985 թվականի արտադրության եզակի Ford Escort RS Turbo-ն:

Լեդի Դին վարել է փոքրիկ ընտանեկան մեքենան երեք տարի (1985-ից 1988 թվականներին), մինչ արքայազներ Ռիչյամս ու Հարիս փոքրիկ էին: Սակայն թագավորական անվտանգության ծառայությունը ստիպել է նրան այն փոխել ավելի թանկ ավտոմեքենայի մոդելով, որն ավելի մեծ անվտանգություն կապահովի արքայադուստր համար:

Ford Escort մակնիշի ավտոմեքենան վաճառքի է հանվել 40 հազար կվ-ից քիչ վաճառք է դրա համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերով: Չնայած այն հանգամանքին, որ Լեդի Դին ավելի թանկ մեքենաներ է վարել, աճուրդի ներկայացուցիչները նշել են, որ Ford Escort-ը շատ ավելի արժեքավոր մոդել է եւ կարող է գնվել նմանատիպ մոդելներից երեք անգամ թանկ:

«Մենք չենք զարմանա, եթե այն վաճառվի 100,000 դոլարով», - ասել է Silverstone Auctions-ի դասական մեքենաների մասնագետ Արվել Ռիչարդսը: Աճուրդը կկայանա օգոստոսի 27-ին:



ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Որո՞նք են խնամասարության սահմանված ժամկետները:

Աննա Մինասյան (31 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ.

Խնամատարությունը կարող է լինել կարճաժամկետ եւ երկարաժամկետ մինչեւ երեխայի չափահաս դառնալը:

Կարճաժամկետ խնամատարությունը կիրառվում է մինչեւ մեկ ամիս ժամկետով, անհրաժեշտության դեպքում եւս մեկ ամիս երկարաձգելու հնարավորությամբ, եթե սույն օրենսգրքով առավել սեղմ ժամկետ նախատեսված չէ: Կարճաժամկետ խնամատարության ժամկետի ավարտից հետո, եթե հնարավոր չէ երեխային վերադարձնել կենսաբանական կամ խնամակալի ընտանիք, իսկ խնամատար ընտանիքը պատրաստ է շարունակել երեխայի խնամքը եւ դաստիարակությունը, ապա նախապատվությունը տրվում է նույն ընտանիքում խնամատարության ժամկետը երկարաձգելուն:

Երկարաժամկետ խնամատարությունը կիրառվում է մեկ տարի եւ ավելի ժամկետով: Երկարաժամկետ խնամատարության պայմանագրի երկարաձգում թույլատրվում է, եթե երեխայի վերադարձն ընտանիք կամ երեխայի որդեգրումը կամ խնամակալությունը (հոգաբարձությունը) հնարավոր չէ:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության

«ԺՈՂՈՎՈՒՐԳ».

Աշխատակազմը երեք աշխատանքային օրվա ընթացքում կազմում է ընտրված երեխայի խնամքը խնամատար ընտանիքում կազմակերպելու մասին դրական եզրակացություն՝ էլեկտրոնային կազմակերպության միջոցով: Խնամատար ընտանիքում երեխայի խնամքը կազմակերպելու մասին եզրակացությունը կազմելուց հետո աշխատակազմը՝

1) մեկ աշխատանքային օրվա ժամկետում այդ եզրակացության վերաբերյալ տեղեկատվությունը մուտքագրում է տեղեկատվական համակարգ, որը մուտքագրելու պահից առցանց դիտման իրավասությամբ հասանելի է լիազորված պետական մարմնին,

2) երեք աշխատանքային օրվա ժամկետում այդ եզրակացության մեկական օրինակներն առձեռն կամ փոստային կապի միջոցով՝ պատվիրված նամակով, տրամադրում է խնամատար ծնող դառնալ ցանկացող անձին եւ երեխայի բնակության վայրի խնամակալության եւ հոգաբարձության մարմնին:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ի՞նչ իրավական ակտի հիման վրա է իրականացվում խնամասար ընտանիք երեխաներին դաստիարակության հանձնելու գործընթացը:

Սաթենիկ Յավրյան (29 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ.

Հայաստանի Հանրապետությունում երեխայի խնամքը խնամատար ընտանիքում կազմակերպվում է ՀՀ կառավարության 2019 թվականի հունիսի 13-ին հաստատված «Խնամատար ծնող դառնալու ցանկություն ունեցող անձանց ընտրության, հաշվառման, երեխայի խնամքը եւ դաստիարակությունը խնամատար ընտանիքում կազմակերպելու, խնամատար ծնող դառնալ ցանկացող անձանց ուսուցման, որակավորման եւ վերապատրաստման, խնամատար ընտանիքում հոգեզավակի խնամքի նկատմամբ վերահսկողության կարգերը, խնամատար ընտանիքին ամսական ժամանակահատվածով դրամական միջոցների վճարման կարգը եւ չափը, խնամատարության պայմանագրերի օրինակելի ձևերը հաստատելու եւ Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի մայիսի 8-ի N 459-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 751-Ն որոշման համաձայն:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության

«ԺՈՂՈՎՈՒՐԳ».

Խնամատար ծնող դառնալ ցանկացող անձը խնամատարություն իրականացնելու նպատակով դիմում է իր բնակության վայրի աշխատակազմ՝ դիմումում համաձայն N 2 ձևի նշելով խնամատարության նպատակով հայցվող երեխաների թիվը, սեռը, նվազագույն եւ առավելագույն տարիքը եւ խնամատարության տեսակը: Մեկից ավելի երեխայի խնամատարություն իրականացնելու ցանկության դեպքում սույն կետում նշված տեղեկությունները յուրաքանչյուր երեխայի համար լրացվում են առանձին:

ՏԵՂԵԿԱՅՎԱԾ

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Երեւանում



Բախվել են Ford Transit մակնիշի եւ Scania մակնիշի բեռնատարը: Բախման հետեւանքով Ford Transit-ը հայտնվել է «ԳԱԻ պոստի» դիմաց՝ հետիոտնի համար նախատեսված մայթին, իսկ Scania-ն էլ բախվել է բետոնե արգելապատնեշին ու էլեկտրասյանը՝ մասամբ վնասելով սյունը եւ կոտրելով նրա վրա տեղադրված էլեկտրական լամպը:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:



Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (010 54-64-23 հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադարձնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝ (060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.



«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը.
«Շարունակությունը կարող էք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22՝/3, հեռ՝ 010 54-64-23
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության 3.08.2022
Պատկերը/Պատկերակազմը/Մուտքը/Վերջինիս/Վերջինիս/2021

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆՂ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: